նաց գմբէթին և պարանաւ ձգեալ հանէին զնոսա արտաքս ։ Եւ Ադրիանուպօլսեցի Մելքոն վարդապետ Տեսուչն Հայոց 'ի տաճարի անդ՝ կամեցեալ փախչել 'ի կողմն Լատինաց , իբրեւ եհաս առաջի մատրան Գալթոյ , հոսեցաւ 'ի վերայ նորա հալեալ կապարն մեծի գմբէթին և մնաց անդ ընդ փլատակօք ․ և յետոյ 'ի մաքրել զհողս եւ զքարինս տեղւոյն , գտին զմարմին նորա՝ ունելով ընդ իւր զգրեանս Հայոց և զբեկորս արծաթոյ ։ Այրեալ տեղիքն են՝ ամբողջ Վերնատունն Հայոց , խորանք , փայտակերտ սենեակք 16 , ամենայն պարագայիւք , և ոչ մի ինչ զերծաւ անտի ․ Պատանատեղին Քրիստոսի , արտաքին մեծ դուռն տաճարին , Գողգոթայի միայն զարդքն , տաճարն Յունաց , դարանք և պահարանք նոցին , շրջապատ Գերեզմանին , մեծ գըմբէթն ։ Ներքին կողմ Գերեզմանին անվնաս և ամբողջ ․ Գիւտ Խաչ , Լուսաւորիչ եկեղեցին Հայոց , Լատինաց եկեղեցին՝ և զարդքն անվնաս և ամբողջ ․ մի միայն մեծ վնասն եղեւ Հայոց եւ յետ այնորիկ Յունաց ։ Զպատմութիւն այրման տաճարին Ս ․ Յարութեան՝ գրեալ են ոմանք 'ի ժամանակին յայնմիկ , որպէս և Թէոդորոս Պատրիարք 'ի նամականիս իւր , և դատաւորք 'ի դատաստանական գիրս , յորոց քաղեալ եդաք աստանօր ։ Գրեալ է նաեւ ոտանաւոր բանիւք Նէոփիտոս Կիպրացի Յոյն կրօնաւոր , այլ լի թշնամանօք և անլսելի հայհոյութեամբ , զորս ոչ տանին մարդկեղէն լսելիք , զի սաւեալ զհետ մտեալ է իբրեւ գռեհիկ և գեղջուկ նախատակոծ բանիւք անարգել եւ անպատուել , մանաւանդ զրպարտել և բամբասել զազգն Հայոց հանդերձ նոցին եկեղեցականօք , քան ուղիղ պատմութեան միտ դնել , որոյ վասն թողցուք ինքեան զվայրապար լուտանս նորին եւ մեք գրեսցուք որ ինչ եղեւն յետ այնորիկ ։

Ի ծագել արեգական եկին և ժողովեցան յարտաքին դուռն տաճարին՝ մեծամեծք այլազգեաց , քաղաքապետն , Եէնիչէրի աղասին , Միւֆթին և այլք , և բազմութիւն մեծ խառն յամենայն ազգաց ․ դիմեցին անդր Եկեղեցականք Յունաց և բողոք բարձեալ աղաղակէին՝ թէ Հայք դիտմամբ այրեցին զտաճարն , հասին անդ եւ Եկեղեցականք Հայոց և Լատինաց , եհարց քաղաքապետն ցՀայս , ընդէ՞ր